

ՏԱՄՆ ԵՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարեկանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւնը ընդունվում է ամէն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԵԿՈՂ 1888 ԹԻԻՆ

„ՄԵԼԿ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Կը հրատարակվի Թիֆլիսում, նոյն դիրքով և նոյն պրոգրամայով: Մեր կը ուսանանք սեփական
ՀԵՌԱԳԻՐՆԵՐ:

«ՄԵԼԿ» տարեկան գինը 10 ռուբլ է, վեց ամսականը 6 ռուբլ:
Գրվել «ՄԵԼԿ»-ն կարելի է ՍՊԱՍԿԱՍՏԱՆԸ (Բարձրագոյն և Բարձրագոյն փողոցների մե-
կիւնում, Թամազիկի տանը):

Կայսերական ուրիշ քաղաքներից «ՄԵԼԿ» գրվելու համար պէտք է ղրմել հետևեալ հա-
ցէով. ТИФЛИСЪ, Редакция газеты «МПАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du jour-
nal arménien «MSCHAK».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՐ ՍՐԵՐՈՒՆԻ

„НОВОЕ ОБОЗРЕНИЕ“

ВЪ 1888 ГОДУ

(ПЯТЫЙ ГОДЪ ИЗДАНИЯ)

будетъ выходить въ Тифлисъ, какъ и въ прошлые годы, ежедневно, по нынѣшней программѣ
газеты литературной, общественной и политической.

Съ 12-го ноября 1887 г. «Новое Обозрѣніе» выходитъ двумя изданіями, изъ которыхъ
первое, вечернее, предназначено для Восточнаго Закавказья и сдается на вечерній побѣздъ же-
лѣзной дороги, а второе, утреннее,—для гор. Тифлиса, Западнаго Закавказья и Россіи.

Условія подписки, съ пересылкою и доставкою: на годъ 10 р., на полгода—6 р., на
три мѣсяца—3 р. 50 к., на одинъ мѣсяць—1 р. 50 к. За границу: на годъ—17 р., на пол-
года—9 р. 50 к., на три мѣсяца—5 р. (Подписка принимается не иначе, какъ считая съ 1-го
числа любого мѣсяца).

Объявленія: на 4-й страницѣ газеты по расчету 5 к. за строку петита или за занимае-
мое ею мѣсто. На первой страницѣ—15 к. за такую-же строку.

Подписка и объявленія принимаются: ВЪ ТИФЛИСѢ—въ конторѣ изданія, Головинскій
просп., домъ кн. Мухранскаго; ВЪ БАКУ—въ отдѣленіи конторы, при аптекѣ Чичковскаго,
на углу Варахтинской и Милитинской улицъ; ВЪ КУТАИСѢ—въ отдѣленіи конторы, при книж-
номъ магазинѣ братьевъ Чиладзе, противъ бульвара, въ домѣ Г. Андроникова.

Изгородные адресуютъ свои требованія: ВЪ ТИФЛИСѢ, въ редакцію «Новаго Обозрѣнія».

Редакторъ М. А. Успенскій.
Издатель кн. З. Р. Тумановъ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. «Русский Инвалидъ»
լրագիր յօդուածը. Բաղադրուած հիւանդանոց հիւ-
նելու առաջարկութիւնը. Ռուս զորք Գլխէ Ռու-
սական յօդուածը. Նամակ Նոր-Բայազէտից.
Նամակ Խմբագրին. Ներքին լուրեր.—ՍՊԱՍԿԱՍՏԱՆԸ
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կ. Պոլսի հայոց պատրիարքի խնդր-
ք. Ամերիկայի Միացեալ-Նահանգները. Արտաքին
լուրեր.—ԽԱՌԻՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՈՐ-
ՍԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«РУССКИЙ ИНВАЛИДЪ» ԼՐԱԳԻՐ ԹՅՈՒՆԱԾԸ

«Հիւսիսային գործակալութիւնը» հաղորդեց
մեզ հետագործ հետեւեալ յօդուածը, որ տպված է
«Русский Инвалидъ» լրագրում այն յօդուածներ-
ն առկայով, որ յարուցեց աւստրիական մամուլը
ուսաց հեծեղազորքի մի քանի զուգորդի տեղա-
փոխվելու պատճառով վարչապալի ղեկավարական
չըջանում: Ռուսաց լրագիր յօդուածը, ասում է
յիշեալ գործակալութիւնը, տպված է անկողնա-
պահ կերպով պատկերացնելու համար մեր և մեր
արեւմտեան հարեւանների ղեկավարական ղրութիւ-
նը սահմանադրուել երկիրներում և բացառելու
համար այն հարցը թէ ո՞ր իրապէս, պատրաստ-
վում է յարձակման և ո՞ր պաշտպանվելու համար:

Գերմանիայի վերաբերմամբ «Русск. Инв.» ա-
սում է, որ վերջին 7 տարեկան ընթացքում գեր-
մանական զորքի մէջ աւելացան 65 բաւալիօն-
ներ և 384 թնդանօթներ, մի և նոյն ժամանակ
սահմանային զօրաբաժինների կազմակերպութիւ-
նը աւելացվեցաւ 21 բաւալիօնով, 24 զաշտային
և 3 բերդային բաւալիօններով, և 15 էսկադրոն-
ներով: Ձկնորական կազմակերպութիւնը ա-

ւելի մեծ է քան թէ մերը. ընդհանրապէս
գերմանական ղեկավարութեան ոյժերը հասնում են
2 միլիոն հոգու, իսկ պատերազմական բիւդ-
ժետը 250 միլիոն ռուբլ գումարով: Ընդունե-
լով, որ իր վրա յարձակում կարող են գոր-
ծել, Գերմանիան այդ ահապէս ոյժերը պատ-
րաստ է պահում միաժամանակ թէ Ռու-
սաստանի և թէ Ֆրանսիայի դէմ: Այն երկաթու-
գային նոր զինքը, որոնք 1878 թիւից սկսած Գեր-
մանիան կառուցեց իր արեւելեան նահանգներում,
4,850 կիլոմէթր տարածութեան վրա, ունին զը-
կաւորապէս ռազմագիտական նշանակութիւն:
Երկաթուղային 11 միլիոնից անկախ զինք կա-
րող են զորքեր բերել մեր սահմանների վրա Գեր-
մանիայի ներքին չըջանալից: Ֆրանսիայից ըս-
տացված կոնտրաբանդային մեծ մասը ծախված է
բերդեր և բանակների կառուցանելու վրա Պոզնա-
նում, Գանցլիգում, Կեոնիքսբերգում և Տօրնում:
Վերջինի մարտկոցներից մին կանգնեցրած է մեր
սահմանից ընդամենը 1,200 սաժնի հեռավորու-
թեամբ: Այժմ ամրացվում է և Գրանդէնց:

Աւստրիան նոյնպէս մեծ ջանքեր է անում ամ-
րանալու. գործող զօրաբաժինները 23 հաւորից
հասցրած են մինչև 32, բացի լանդվերի հետեւակ
14 զօրաբաժիններից և հօնվէլդի: Գալիցիայի
բերդապահ զօրքը աւելացրած է 18 էսկադրոնե-
րով և 13 բաւալիօններով: Յարձակման առաջն
աւանելու համար 1878 թիւից սկսած կառուցված
են նոր երկաթուղային զինք 4,500 կիլոմէթր
տարածութեան վրա: Կարպատեան սարերի շղթա-
յով անցնում են մի քանի երկաթուղային զինք,
որոնցից չորսը ուղղված են անմիջապէս մեր
սահմանի վրա: Ներկայումս արդէն 6 միլիոն-
ից անկախ երկաթուղային զինք կարող են
կենտրոնացնել Գալիցիայում: Ներքին նահանգնե-
րից զօրքերի ահապէս քանակութիւն, իսկ սահ-
մանի վրա կան 9 հաւոր կայարաններ զօրքի իջե-

ւանելու համար, կան բազմաթիւ բարակներ զօր-
քի համար, ընդարձակ միջերանոցներ և բերդեր:
Պերեմիսլ և Կրակով դարձրած են ամրացրած
բանակներ. Կրակովում կայ վազօնների նշանա-
ւոր քանակութիւն, որոնք յարմարեցրած են ուս-
սաց երկաթուղիների վրա երթնելու համար,
իսկ աւստրիական մարտկոցներից կարելի է ռը-
բակոծել Ռուսաստանին պատկանող սահմանա-
դրուել երկիրները:

Բայց այդ ժամանակ ինչ է անում Ռուսաստա-
նը, շարունակում է «Русск. Инв.» լրագրում: Չը-
նայելով պարզապէս ներկայացող վտանգին, Ռու-
սաստանը, ճանաչելով պատերազմը, որպէս մի
սարսափելի աղէտ ամբողջ մարդկութեան համար,
յոշնվարի 1-ից 1881 թիւի մինչև յոշնվարի 1-ը
1883 թիւի փոքրացրեց իր զօրքի քանակութիւնը
100,000 հոգով: Թէև հետեւեալ տարիներում
մեր զօրքի թիւը նորից աւելացվեցաւ, աչքի ա-
ռաջ ունենալով թէ աւելանան զօրքերը և թէ
հարեւանների պատերազմական պատրաստութիւ-
նը, բայց այնու ամենայն ապօրինի ուսուսաց
զօրքը 75,000 ղինուոր պակաս ունի, քան 1881
թիւին է ունեցել, մինչդեռ հարեւանները այդ ժա-
մանակամիջոցում նոյնքան քանակութեամբ աւե-
լացրին իրանց զօրքի թիւը: Պատերազմական
ժամանակ, Ռուսաստանը, անտարակոյս, զուրս
կը բերի բազմաթիւ զօրք, բայց այդ զօրքի կենտ-
րոնացնելը աւելի դժուար կը լինի, քան թէ հա-
րեւանների մօտ: Մեր արեւմտեան սահմանադը-
խում կառուցված են երկաթուղիներ 2,828 կիլո-
մէթր երկայնութեամբ, բայց Գերմանիան և Աւ-
ստրիան մի և նոյն ժամանակամիջոցում կառու-
ցեցին իրանց արեւելեան նահանգներում, երկու
անգամ աւելի փոքր տարածութեան վրա, ընդա-
մենը 9,300 կիլոմէթր երկայնութիւն ունեցող
երկաթուղիներ: Մեր երկաթուղիները ոչ մի տեղ
այն պաշտպանողական զինք չեն զուրս գալիս,
որը կարող է Պետերբուրգ-Վարչապալ-Օդէսայի
եռանկիւնը, իսկ հարեւանները հասցրին իրանց
երկաթի ճանապարհները ուղիղ մինչև մեր սահ-
մանները: Մի պարզ անհրաժեշտ վրա ցոյց
է տալիս, որ ուսուսացնելու սահմաններում է
անհրաժեշտ արշաւանքը: Չունենալով իր ձեռքի տակ
երկաթուղային ցանցը աւելացնելու համար հար-
կաւոր եղած այն ահապէս նիւթական միջոցները,
որ ունեն հարեւանները, Ռուսաստանին մնում է
միայն ուժեղացնել իր բերդերը և աւելացնել իր
զօրքի թիւը սահմանադրուել երկիրներում, որպէս
զէ անհրաժեշտ կերպով վտանգի չենթարկվի: Հա-
րեւանների եռանդուն պատրաստութիւնները ստի-
պեցին մեզ ևս համապատասխան միջոցներ
դիմելու: Հեծեղազօրքի մի քանի զուգորդի տեղա-
փոխվելու կարելի է յուզել հասարակաց կարծիքը
և մեղադրել Ռուսաստանին պատերազմական դի-
տաւորութիւնների մէջ: Սակայն Գերմանիայի և
Աւստրո-Ունգարիայի ղեկավարական մարդիկ լաւ են
հասկանում այդ միջոցների պաշտպանողական
նշանակութիւնը և հանդիստ կերպով են հաշուել,
թէ զօրաբաժինների որքան մեծ թիւը Ռուսաստա-
նը պէտք է փոխադրել խաղաղ ժամանակ զէպի
արեւմտեան սահմանները, որպէս զէ հաւասարա-
կուութիւն վերականգնեն իր և իր հակառա-
կորդների զօրքերի քանակութեան մէջ: Գումարե-
լով այն ոյժերը, որոնց օգնութեամբ, պատերազ-
մի յայտնվելու դէպքում, կարելի կը լինի արագ
արշաւանք զօրքը Ռուսաստանի վրա, նրանք
այժմս էլ կարող են երազել, առաջին լուսնե-
րում գտնել, յաղթող հանդիսանալու, սակայն ուս-
ուց ղեկավարական մարդիկ իրանց կողմից կարող են
հաւատարմ լինել պատերազմի վերջնական աղօղ հե-
տեւանքի մասին, թէկուզ խաղաղութեան լիդայի
ամբողջ ոյժերը արշաւանք զօրքին Ռուսաստա-
նի դէմ: Բայց այնու ամենայն մենք պարզ
խոստովանում ենք, որ ուսուսաց սահմանների
պաշտպանութեան պատրաստութիւնը դեռ ևս ա-
պահոված չէ և եթէ խաղաղութեան լիդան իրան
համար իրաւունք է համարում, զարգացնելով իր
պաշտպանողական միջոցները, ուսուսաց հողի մի

քանի մասերը ենթարկել իր առաջաւոր մարտ-
կոցների հրացանաձողութեան, ուստի Ռուսաս-
տանն էլ ունի նոյնքան անպայման իրաւունք,
թանգ համարելով խաղաղութեան պահպանելը,
հոգալ իր պաշտպանութեան մասին և ամեն մի-
ջոցներ գործ դնել իր երկիրը և իր պատիւը ան-
խախտ պահպանելու:

«Русск. Инв.» լրագրի այդ յօդուածին «Jour-
nal de St. Petersburg» լրագիրը պատասխա-
նում է հետեւեալը. «Իրողութիւնների այդ պարզ
մի առ մի թելը, սահմանակից կայսրութիւննե-
րի մէջ ձեռք առած այն միջոցների մի առ մի
համեմատել այն կարգադրութիւնների հետ, ո-
րոնց նորերումս ձեռնամուկ է եղել ուսուսաց կա-
ռավարութիւնը, այն աստիճան պերճախօս է,
որ բացատրութիւնների կարօտ չէ: Ամեն մի
անկողնապահ դատաւոր կը համաձայնվի, որ
Ռուսաստանի վրա չէ ընկնում խաղաղ ժամանակ
անընդհատ ղեկավարվելու պատասխանատուութիւ-
նը: Ճշմարիտ է, որ պետութիւնները, որոնք կեն-
տրոնական Եւրոպայում կազմեցին խաղաղու-
թեան լիդան, բացառում են իրանց այդ դա-
նադիրների կապելը, ինչպէս և անընդհատ ղեկա-
ւարվելը խաղաղ status—quo-ի (եղած դրութեան)
պահպանութեան ցանկութեամբ,—բայց եթէ այդ
այդպէս է, այն ժամանակ կայսերական կառա-
վարութիւնը դրանով միանում է խաղաղութեան
այդ երաշխաւորութեանը, ձեռնամուկ լինելով
հաւասարակշռութեան անհրաժեշտ պաշտպանու-
ղական միջոցների իր սեփական սահմաններում:
Սակայն մի հարց առաջմ մնում է չը լուծված
փրկափող si vis pacem, para bellum (եթէ ու-
զում ես խաղաղութիւն, պատրաստ եղիր պա-
տերազմի համար) սկզբունքի այդ ի չար գործա-
ծելը, որը ծանր բեռն պէս բարձրում է բոլոր
պետութիւնների թէ ֆինանսների, թէ տնտեսա-
կան դրութեան և թէ բոլոր գործնական փոխա-
դարձ յարաբերութիւնների վրա, մի և նոյն ժա-
մանակ կրեւոր գրգռելով և յուզումներ սերմա-
նելով մարդկանց մէջ,—փրկափող այդ սկզբուն-
քը հանդիսանում է որպէս ամենալաւ միջոց այն
խաղաղութիւնը պահպանելու, որ ըստ երեւոյ-
թիւն, ամենքը ցանկանում են և որը, մեր կարծի-
քով, երկար ժամանակի համար ապահոված է չը-
նորով մեր բարեկամական յարաբերութիւնների
մեր հարեւանների հետ»:

ԲԱՎԱՆԴԱԿՈՒՆ ՀԻՄԱՆԴԱՆՈՅ ՀԻՄՆԵԼՈՒ ԱՌԱ-
ՋԱՐԿՈՒԹԻՒՆ

Բաղուի նախահանգներում գտնվողներին բաշ-
յայտնի է, թէ որքան առողջ, ուժեղ ու զուարթ-
երես երիտասարդներ գալիս են Բալախան և մի
քանի տարի մնալով, վերադառնում են հայրենիք
Խառամած, լղբաւոր, խեղանդամ, կաշուի դանա-
զան հիւանդութիւններով, կրծքի ցաւով և ֆրան-
սիական ախտով բռնված, երբեմն ևս զոհ են
դառնում դժբաղդ պատահարների և անհեղձ կոր-
չում այս նիւթականով հարուստ ու բարոյականով
աղքատ երկրում: Եւ չը նայելով, որ այդ երիտա-
սարդները կազմում են զլիաւոր շարժիչները այն
ահապէս մեքենայի, որ անուանվում է նախնի
արդիւնահանութիւն, սակայն և այնպէս մեծ մա-
սամը զուրկ են մարդասիրական կարեկցութիւնից
և բազմիցս աչքաթող են անվում իրանց մեծերի
կողմից: Հիւանդանում էր բանտը, խաչվում էր,
այրվում, ձեռներն ու ոտները կտրում: անմիջա-
կան բժշկական օգնութիւն չէր կարելի հասցնել,
պէտք էր սպասել, որ քաղաքից բժիշկ գար, կամ
հիւանդը ինքը քաղաք դնար (երբեմն ևս անտէր
ձգելն ու արձակելը հաշի մէջ է մտնում), պատ-
ճառը այստեղ ղեղապտուռ ու բժիշկ չունենալու
մէջն է: Փառք Աստուծու, այժմ քաղաքում ենք, ո-
րովհետեւ ղեղապտուռ էլ ունենք, բժիշկ էլ ինչ ա-
սել կուզի, որ այժմ մեզ բաւական թեթեւացած
ենք զրուս, քանի որ ամեն լուսն առանց նեղու-
թեան կարելի է բժշկական օգնութիւն ստանալ:
Բայց հարցը նրանումն է, թէ արդեօք դրանով

բաւականանալու ենք և կարծելու, որ մենք լիովին մեր նպատակին հասած ենք, —հէ:

Նաւթահանքերում բռնիքը դրուծելու առանց ուժեղ, առանց դրամական մի ապահով աղբիւրի, լոկ պատահական հիւանդներից ստանալիք այցելւածորի յոյսի վրա հիմնված, բաւական խախուռ է: Չենք կարծում, որ մի բռնիք երկար կարողանայ մնալ այստեղ միայն օդային յոյսերով: Նաւթահանքերում ընդհանրապէս բռնիք օդ-նութեան դիմում են կամ աղքատ ծառայողները, որոնք դրամական աւելի միջոց չունեն քաղաքում փորձառու, մասնագէտ բռնիքի դիմելու, կամ նը-րանք, որոնք յանկարծական դժբաղդ դէպքից վը-նասված են: Դրանք էլ մեծ մասամբ մշակ դասա-կարգիցն են, ուրեմն և չքաւոր: Ինչ անէ բռնի-կը: Եթէ մարդասիրական ձայնին լսէ, պէտք է վարձ կամ քիչ առնէ, կամ ամենին չառնէ, որ իրան բարոյովին ձեռնառու չէ և միտք էլ չունի, քանի որ դրանով է ապրելու: Եթէ մարդասիրա-կան զգացմունքը լռեցնէ և ըստ արժանոյն իր վարձը պահանջէ, հիւանդն անկարող լինելով վը-ձարել կամ բռնիքին էլ չի դիմի, կամ ստիպման պէտք է լինի բռնիքի կարեկցութիւնը հայցել: Այս-տեղ միջանկեալ ասենք, որ շատ ծառայող հի-ւանդներին համար ոչ միայն չեն վճարում նրանց գրասենեակները, այլ և սպառնում են պաշտօնից արձակել, եթէ համարձակվին բռնիքի փող պա-հանջել: Բանից դուրս է գալիս, որ բռնիք իր անսպասով դրուծելու զգալով՝ մի օր մնաւ բա-րով է ասելու այս հարուստ և մեծահոգի նաւ-թահանքերին դրամական պակասութեան պատ-ճառով: Այդ ևս աւելի ծիծաղելի է ու ամօթա-բեր նաւթահանքերի տէրերին, բայց լրագիրնե-րում կրկին բղաւելու են թէ բռնիք է հարկաւոր, այս, անհրաժեշտ է նրա ներկայութիւնը նաւթա-հանքերում, և այդ կոմիզիան երկար կը խաղաց-վի, եթէ մի դրական ու հիմնաւոր միջոցի չը դիմվի: Ահ սքանչ են ամենահասարակ ու դիւ-րին իրադրո՞նքի միջոցները:

Թող բռնիքը պահանջէ իրան ներկայացող հի-ւանդից, եթէ ծառայող է, նրան գրասենեակից տրված մի տոմսակ կառավարչի ստորագրու-թեամբ, հակառակ դէպքում հիւանդին չընդունին: Հասկացի՛ր ամեն մի կառավարչի կամ շտաբի ինի, որ պարտաւոր է իր գործում հիւանդացած ծա-ռայողին համար բռնիքն վճարել: Կամ թէ թող ա-մեն մի գրասենեակ համաձայնի իր ծառայողների թւի համաձայն ամսական մի որոշ գումար նշա-նակել բռնիքին, որը իր կողմից պարտաւորվի նը-րա հիւանդներին ձրի բռնիքի: Ինչպէս լուծու ենք, այս վերջին միջոցը արդէն դրո՞ւստում են Նո-բէլ, Շերայիւ, Ծատուրով, Արաքիւով ֆիրմաները: Բայց մեղ զարմացում է այն, թէ ինչո՞ւ միւս հայ նշանաւոր ֆիրմաները, ինչպէս Արամեան, Բուրաղեան, Եղիազարեան և ուրիշները մինչև այժմ անմասն են մնացել այդ գործում: Յոյս ունենք, որ նրանք, ինչպէս և միւսները, չեն զլանայ ի-րանց պարտականութիւնը կատարել:

Բայց բռնիքն ապահովութեան հարցը վճարած կարելի է համարել, եթէ աշոյղին հիմնել նաւթա-հանքերում մի հիւանդանոց: Այստեղ ծառայող-ները մեծ մասամբ աղապ կամ ընտանիքները հե-ռու տեղ թողած մարդիկ են, որոնք ընտելւում են ընդհանրապէս ընկերային մի և նոյն սենեա-կում կայ սենեակ, որի տարածութիւնը հազիւ 3—4 սառփէ է, բայց միշտ ապրում են 6—8 հո-գի: Հիւանդացողներին մեծամասնութիւնը այս տե-սակ ապրողներն են կազմում: Գիցուք մշակնե-րից մէկը հիւանդացաւ, բռնիքը տեսաւ, դեղ դը-րեց: Բայց ո՞վ պէտք է բռնիքի պատուէրները ճըշ-դութեամբ կատարէ և ճրտեղ. չէ որ աշոյղու-թեամբ ու շուտով բռնիքը զլխաւոր ֆակտորնե-րից մէկը հիւանդին խնամելն ու նրա կացարանն է: Իսկ այստեղի մշակի չընթացած պայմաննե-րին ծանօթ եղողը կարող է միայն ծիծաղել ծա-նըր հիւանդութիւններին ժամանակ բռնիքի մի-ջոցների դիմելու վրա: Միթէ կարելի է 5—6, երբեմն ևս 10—20 ընկերներին մէջ գնալստի, կեղտոտ, խոնաւ խրճիթներում առանց խնամա-տարի հիւանդ բռնիքի, մանաւանդ, որ այստեղ ոչ միայն ցերեկն ու լի օրերը, այլ և զինքներն ու կիրակիները շարունակ գործ է կատարւում, և մի ընկեր ինչքան էլ ցանկանար հող տանել իր հիւանդ ընկերոջ վրա, ժամանակ չը պէտք է ունենայ: Միտք է երկու բան անել. կամ ամեն մի նաւթահանքի տէր պէտք է մի յարմար սե-նեակ յատկացնէ իր հիւանդ ծառայողների հա-մար և կամ պէտք է մի ընդհանուր հիւանդանոց

հիմնել նաւթահանքերում: Առաջին միջոցը իրա-դրո՞նք բաւական թանգ կը նստի ամեն մի խօ-ղէյին, իսկ երկրորդը, ընդհանրապէս շատ էժան ու ձեռնառու է նաւթահանքի տէրերին և շատ հեշտութեամբ դուրս կը գայ, եթէ միայն հան-քատէրերը չը խնային իրանց աշակցութիւնը դը-րամական կողմից: Մենք ուրախութեամբ լսե-ցինք, որ տեղիս բռնիքի պ. Զախարեան ար-ձարեւ է այդ համակրելի միտքը, համոզել է շա-տերին, կազմել է ծրագիր և ամենայն կերպ ջանք է անում դուրս բերել այդ հանրագումարը: Եր մի քանի եռանդուն պարոններին աշակցու-թեամբ: Մենք չենք կարծում, որ հանքատէրերը այնքան քարավարի դտնվեն դէպի իրանց ծառա-յողները, որ խնային տասնեակ հազարներից մի քանի հարկւր ռուբլի: Նուրբէլ մի այնպիսի հիմ-նարկութեան, ուր նրանց ծառայողները առանց նաւթի ու բռնիքի առանց փողի թող փորձեն գործին մօտ եղողները մի քանի խօսք ասել հան-քատէրերին այդ աշխու դործի մասին և մենք լի-ւայոյս ենք, որ գրեթէ բոլորը չեն խնայի իրանց լուծան ձգելու այդ բարեգործական հիմնարկու-թեան գանձարանը:

Երբ ի մօտոյ կը ծանօթանաւ այդ գործի հետ, կաշխատեմ մանրամասն տեղեկութիւններ հաղոր-դել ընթերցող հասարակութեան նրա մասին: Մի-այն թող պ. Զախարեան և իր ընկերները, ու-րոնք ամենայն շնորհակալութեան արժանի են այդ իրանց աշխու ձգտման ու տոկոս եռանդի հետքը, չը վնասուին ու չընկերակն ոչ մի արդէնքի առաջ, թող յիշեն, որ բազմաթիւ թշուառներ ա-պագայում օրհնելու են իրանց՝ այդ սուրբ գործի համար:

ՌՈՒՍ ԳՐՈՂ. ԳԼԵԲ ՈՒՍՊԵՆՍԿԻՆ ԶՅՈՒՆԱՆԸ

Նոյեմբերի 15-ին Պետերբուրգում տօնվեցաւ ժամանակակից ռուս ժողովրդական գրող Գլեբ Ուսպենսկու գրական գործունէութեան քը-սանհինգամեակը: Ժողովրդական գրականութիւնը ներկայումս այնպիսի մեծ նշանակութիւն և կա-րեւորութիւն է ստացել, որ մի այդպիսի համա-կրկի ժողովրդական գրողի գործունէութեան հը-րապարակական տօնակարգութիւնը միանգամայն գովելի է, որովհետեւ այդ մարդը իր տաղանդա-ւոր գրչով ամբողջ քսան և հինգ տարի պաշտ-պէս է հանդիսացել ամենալայն և ամենաբարձր գաղափարների, հանդէս դուրս բերելով ժողովրդի կեանքը և ժողովրդի մարդուն իր բոլոր գոյնե-րով: Ուսպենսկի իր գրական գործունէութիւնը սկսեց 1862 թվին, և առաջին անգամ ասպարէզ դուրս եկաւ մի փոքրիկ գրութեամբ և շատ շու-տով իր վրա դարձրեց ընդհանուր ուշադրութիւ-նը: Ուսպենսկի բնկերտութեան պարտքն է, և իր բոլոր գրութեանցից մէջ հաւատարմի մնալով որոշ սկզբունքներին, արժանացել է մարդասիրութեան, ճշմարտութեան և ազնւութեան զգացմունքները, պաշտպան է հանդիսանում այն բոլորին, որոնք կուտան են անպաշտութեան ճշմարտելի, և հար-տահարութեան դէմ: Իր գրական քսան և հինգ ամեայ գործունէութեամբ նա մի զօրեղ տպաւո-րութիւն է թողել, նա կենդանութիւն է տուել շատ բարձր սկզբունքներին, և այդ պատճառով շատ հասկանալի է, թէ ինչու մեծ սիրով և հա-մակրութեամբ վերաբերվեցին դէպի նրա յօրե-լեանք ամեն շրջանի մարդիկ: Յօրեւանի ժամա-նակ Ուսպենսկուն ներկայացրին մի ուղերձ, որի տակ ստորագրել էին մի քանի հարկւր անհնը-րեցաւ մէջ կային գրականագէտներ, ուսումնական-ներ, ուսանողներ, ուսանողուհիներ, պետական ծառայութեան մէջ եղողներ, դանաղան անկախ պարապունքի տէր մարդիկ, և նոյն իսկ ֆիդե-լիական աշխատանքի ներկայացուցիչներ: Վերին աստիճանի համակրական կերպով դրած այդ ու-ղերձը վերջանում է հետեւեալ տողերով. «Վսն տեսակ պարապունքի, հասակի և շրջանի հաղա-բաւոր մարդիկ կարող են մասնակից անել այն-հանդէս ծառայութիւնների վրա, որ դուք արել էք ձեր գրականական արդիւնաւէտ գործունէու-թեամբ: Հաւատարմեք, որ ձեր գործունէութիւնը հասարակութեան համար ունի անպիսի կրթիչ նշանակութիւն, յիշեցէք, որ ձեր խօսքը արձա-գանք է դառնում հաղաբաւոր մարդկանց սրտերում, իմացէք, որ ձերանով այդ հաղաբաւոր մար-դիկ սիրում են այն ճշմարտութիւնը և արդա-րութիւնը, որը դուք անընդամ կերպով քարոզում

էիք ամբողջ քսան և հինգ տարի: Տայ Աստուած, որ դուք ճշմարտութեան և արդարութեան պաշտ-պան լինիք էլի շատ և շատ տարիներ:»

Այդ ուղերձը մեծ տպաւորութիւն թողեց յօ-րեւանի վրա. յաղթած ձայնով նա շնորհակալու-թիւն յայտնեց ուղերձը ստորագրողներին, և յայտնեց, որ այդ համակրութիւնը ամենալա-ւարճատրութիւն է այն բոլոր նեղութիւնների փոխարէն, որ նա կրել է իրրւ գրող ամբողջ քսան և հինգ տարի, և դրանով աւելի ոյժ կը ստանայ շարունակելու: Գնալ այն ճանապարհով, որը ինքը ընտրել է Նոյն օրը Ուսպենսկի Ռու-սաստանի ամեն կողմերից ստացաւ բազմաթիւ ուղերձներ, համակրի և հեռագիրներ, որոնց մէջ արտայայտւում էր մեծ համակրութիւն և յար-գանք դէպի այդ ժողովրդական տաղանդաւոր գրողը:

ՆԱՄԱԿ ՆՈՒ-ԲԱՅԱՋԷՏԻՑ

Հոկտեմբերի 28-ին

Այսօր վերջացաւ Նոր-Բայաջէտի երրորդ մասի զինուորների վիճակահանութիւնը: Նոր-Բայաջէտի զաւառը բաժանված է երեք մասի. քաղաքը իր չորակայ զիւղերով, Գեօղաղարա գիւղը իր չը-ջակայ զիւղերով և Գարաշիպազի մասը իր զիւղե-րով: Այս վերջինի մէջ կան մարականների 7 հատ զիւղեր: Առաջին մասից տարված են 32 հոգի, երկրորդից 49 հոգի, իսկ երրորդից 58 հո-գի, որոնցից 51 հայեր են, իսկ 7 հոգի մալական-ներ: Պէտք է ասած որ Գարաշիպազի ժողովուրդը ամեն կողմից բարձր է Գեօղաղարայի մասի ժո-ղովրդից, որովհետեւ այդ ժողովուրդը աւելի համակցող և գործունեայ է, պարագլեւով դանա-ղան առեւտրով, ամառ ձմեռ միշտ երթևեկու-թիւն ունենալով Թիֆլիս և Երևան:

Վիճակահանութիւնից առաջ Ախտա գիւղում, ուր նիստ ունէր զինուորապետական ատենադ, մի մալական ֆուրգոնչի չը կարողանալով կանգնե-նել իր ձիերը, իր ֆուրգոնի անիւների տակ է գցում մի հայ կնոջ, որը տեղն ու տեղը հողին աւանդում է: Այդ տեսնելով Ախտայի հա-յերի և մալականների մէջ սկսվում է կռիւ: Մա-լականները լսելով իրողութիւնը և կարծելով որ հայերը պէտք է մալական ֆուրգոնչուն վնասեն, հաւաքվում են մեծ բազմութեամբ իրանց կրօնա-կցին պաշտպանելու համար: Բայց դաւաճապետ պ. Զահարեանից, որ նոյն րօպէին հասնում է կռիւ հանդէս եղած տեղը, իր խոհմ վարմուն-քով և համոզեցուցիչ խօսքերով հանդարտեցնում է երկու կողմն է:

Այսօր, ինչպէս ասեցին, Գարաշիպազի բաժնի վի-ճակահանութիւնը վերջանալով՝ այդտեղից Երևան ուղևորվեցան 51 հայ և 7 մալական նորակոչնե-րը: Արտաշատ էր թէ հայ և թէ մալական ծերե-րի արտասուալի բաժանվելը իրանց զաւակներին: Երբեմն ծէրը կատարվեց յետոյ պ. Դա-հաթիւնեանց զիմեց նորակոչներին ջերմ, սիրա-լիկ և քաջարող խօսքերով: Նա ամբողջ սրտից բարի ճանապարհ և ամենայն աջողութիւն ցանկա-ցաւ կորիչ դարաշիջագիներին, յիշեց որ հայը, զինուոր եղած ժամանակ, երբեք չէ դաւաճանել ծառայութեան պարտաւորութիւնը, յիշատակեց մի քանի երեկի անուններ հայ զորապետներից ինչպէս Լազարևի, Տեր-Օւլակասովի, Լորի-Մէլիքովի և Զօլֆօշիկովի և այլն, և ցանկացաւ երիտասարդ զինուորներին սրանց պէս երեկել դառնալ, աւե-լանքներով որ դրա համար հարկաւոր է մի կողմից հնազանդութիւն ծառայութեան մէջ, իսկ միւս կողմից արիւնքիւն, քաջութիւն և բարի անուն: Էսկ ձեր ծնողներին ջերմ աղօթքները, վերջացրեց նա, միշտ կը պահպանեն ձեզ ամեն տեսակ փո-րձանքներից, ուրիշ կողմից էլ ձեր մասին հասա-լաւ համարաւ կենանք իր տայ ձեր ծնողներին, և ոյժ կը տայ նրանց սպասելու, մինչև որ դուք կը վերադառնաք նրանց զիրկը:»

Նորակոչների ֆուրգոններում նստելուց առաջ տեղիս կարուածատէր Յովնանէյ Մէլիք-Աղամա-լեան, հաշտարար դատաւոր, դիտանցիայի զԸ-խաւորը և ուրիշ շատերը իրանց մէջ փոքր հան-գանակելով, ընծայեցին մի փոքրիկ դուժար ճա-նապարհ ընկնող նորակոչ զինուորներին:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 4 դեկտեմբերի

Ս. Լյվիսկին: Սիրելի, ըստ նախընթաց բարե-

հաճութեան Նորին Վեհախառութեան և թող-տութեան երկրիս իշխան կառավարչապետի հրա-մայիլ է յայտարար կողմատի վիճակների առաջ-նորդներին բանալ ժողովարարութիւն կամաւոր նուիրատուութիւնների յօդուտ հրկիզում և սո-վատանջ դէյթունցիներին. և այդ հիման վերայ թեմիս գաւառական հայաբնակ քաղաքներում և զիւղերում ժողովարարութիւն այդ նպատակի հա-մար յանձնված է վատահելի եկեղեցական և աշ-խարհական անձններին. որպէս զի և քաղաքի բարեպաշտուն հայ ժողովրդականը ծանօթ լինեն եղած կարգադրութեան և մասնակցեն իրանց թշուառացած եղբայրներին օգնելու քրիստոնէա-կան սուրբ գործին, կարգադրած եմ կարգալ Նո-րին Վեհախառութեան կոնդալը ամսիս 12-ին, չաքաթ երեկոյեան, Վանաց առաջ եկեղեցում և այնուհետև միւս զլխաւոր եկեղեցիներում: Նուիր-ատուութիւններ ընդունվում են ինձ մօտ Առաջ-նորդարանում և հետզհետէ կուղարկվեն Կ. Պօլիս Ձէյթունի հրկիզում օգնութեան յանձնաժողովի Ատենապետ Պատրիկ Էֆէնդի Աիւպէնկեանին, համաձայն հրամանի Վեհախառ Կաթողիկոսի. և ամեն անգամ կը տրվի տեղեկութիւն Կ. Պօլսոյ սրբազան պատրիարքին և Ս. Լյվիսկին սինօդին:

Հաղորդելով ձեզ վերադրեալը, մեծապատիւ տէր, պատիւ ունեմ խնդրելու ձեր բարեհաճու-թիւնը գետնուրու այս նամակ «Մշակի» մէջ ի դիտութիւն յարգոյ ընթերցողներին, մի և նոյն ժամանակ և ձեր կողմից հրաւիր կարգաւոր շուտա-փոյթ օգնութեան ձեռք կարկառել մեր տառա-պեալ եղբայրներին, և եթէ կարելի է, հանդանա-կութիւն բանալ և խմբադրութեանը մէջ, նուիր-ատուներին զիւղութիւն և գործին արալ ըն-թացը տալու համար, որի մասին կանխաւ շնոր-հակալութիւնս յայտնելով՝ մնամ հաւատեաւ յարգանացս առ ձեզ՝ արթնարար

Արիտակէս Կաթողիկոս

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կիրակի օր, դեկտեմբերի 6-ին, Նորին Կայսե-րական Բարձրութեան Թագաժառանգի անուանա-կառութեան տօնը լինելով, Թիֆլիսի բոլոր եկեղե-ցիներում մարմանքներ կատարվեցան և քաղաքի բոլոր փողոցները դարձան լինելու զօրակներով:

Կիրակի, 6-ին դեկտեմբերի, կովկասեան կառա-վարչապետի պալատում, հանդիսաւոր կերպով տօնվեցաւ զենեալ-աղիւտանտ, պետական խորհր-դի անդամ, իշխան Լուկա Սլանովիչ Մէլիքովի զինուորական ծառայութեան յիսնամայ յօրե-լեանք: Իշխան Մէլիքով մի ժամանակ կովկասեան փոխարքայի պաշտօնակատար էր: Նա ծնվեցաւ 1817 թվին և մտաւ զինուորական ծառայութիւ-նը 1835 թվին, իսկ 1837 թվ. դեկտեմբերի 6-ին պրօպոզիլի, սպայի առաջին աստիճանը ստա-ցաւ: Իշխանը իր ծառայութեան գրեթէ ամբողջ ժամանակամիջոցը անցկացրեց կովկասեան լեռ-նաբնակների երկարամեայ պատերազմների մէջ:

Շաքաթ օր, դեկտեմբերի 5-ին, Թիֆլիսի ժո-ղովրդանի դահլիճում կայացաւ կօնցէտ յօդուտ Նորաշէնի ուսումնարանի: Դահլիճը կատարելա-պէս լի էր հասարակութեամբ: Հասարակութեան անդին մեծամասնութիւնը հայեր էին կազմում: Կատարողներից ամենից շատ աջողութիւն ունե-ցան՝ Կիլիկի Եօզեֆովիչ, օրիորդ Զվիլադինա և պ.պ. Լօղի ու Պետրոսեան: Օրիորդ Զվիլադինա այդ երեկոյ մանաւանդ մեղ շատ դուր եկաւ իր զեղեցիկ, հեւթալի կոնտրապտօ ձայնով: Պ. Պետրոսեան կարգաւ մի քանի ոտանաւորներ ուսուցէն լեղուով և մանաւանդ վերջինը, ուն-դարականից վերցրած «Вѣстое покрывало» բա-նաստեղծութիւնը նրան շատ լաւ աջողվեց: Նա ունի շատ արտայայտող ու շարժուն դէմք, այն-պէս որ նրա մի մի կան բաւական գրաւիչ է: Բայց ամենից շատ աջողութիւն ունեցաւ և կօն-ցէտի հերոսներն էր այդ երեկոյ՝ Կիլիկի Եօզե-ֆովիչ, Վրաճանքի և Վրաճանքի վերջ չը կար նրա երգած իւրաքանչիւր կտորից յետոյ, իսկ երբ տիկինը երգեց հայերէն լեղուով յայտնի «Ո՛հ անուշ» երգը, հասարակութեան ողեւորութիւնը իր զգալի նշանակութեան հասաւ: Շնորհաւորում ենք տիկինը նրա աջողութեան համար. նա ապացու-ցեց, որ իր զեղեցիկ ձայնի հետ նա միացնում է և իրան համար օտար լեղուի բոլոր նրբութիւն-ները երգել մէջ որոշ և հաւատարմի կերպով ար-

իսկ յարձակողական նպատակներ Գերմանիան չունի: Բէյլստադը օրինադէմ համակրութեամբ վերաբերվեց, և յանձնեց այդ օրինադիմը յանձնաժողովին:

ՍՅՖԻԱ, 5 դեկտեմբերի: Սօֆիայում և զաւառներում ծաղած ապստամբութեան լուրը անհիմն է: ՓԱՐԻՑ, 5 դեկտեմբերի: Պատերազմական մի-նիստերի պահանջը 11 միլիոն ֆրանկ զօրքի պէտքերի վրա նշանակելու մերժվեցաւ. պատգամաւորները ժողովից և նոյն նպատակով նշանակված է միայն 4 միլիոն: Այսօր պատգամաւորները ժողովի նստաշրջանը փակվել է:

ԲԵՐԼԻՆ, 5 դեկտեմբերի: «National Zeitung» լրագիրը այն միտքն է յայտնում, որ «Русский Инв.» խելացի է խոստում, առանց զրգուելու, և այդ պատճառով չէ կարելի յոյս չունենալ համաձայնութիւն կայացնելու վրա, որը ամենքի համար հաւաստարարէ սօղափար և յարգելի է:

ԼՈՆԴՈՆ, 5 դեկտեմբերի: «Morning Post» լրագիրը համարում է «Русский Инв.»-ի յօդուածը իբրեւ մի հրաւեր դէպի պատերազմ, բայց «Times» խոստովանում է, որ յօդուածի մէջ մի խելացի բան կայ. երեք պետութիւնների դաշնակցութիւնը համարեալ թէ մի նախազգուշութիւն է Ռուսաստանի դէմ, և այդ պատճառով դարմանալի չէ Ռուսաստանի կողմից այն բանը, որ նա յայտնում է թէ ինքն էլ համապատասխան պատրաստութիւններ է տեսնում. բայց այդ նախազգուշութեան միջոցները ոչ մի կողմից չէ կարելի սպառնալիք համարել և «Русский Инв.»-ի յօդուածները չեն կարող դեռ ևս ապացոյց լինել, որ քաղաքական դրութիւնը իրաւ կրիտիկական կերպարանք է ստացել:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 5 դեկտեմբերի: Սենատը պարզաբանեց, որ անձնական ազնուականները, որոնք ունեն անշարժ կալուածներ, պարտական չեն տուրք վճարել ազնուական ժողովարաններին:

ՊԵՏԵՐԵՐԼՈՎ, 5 դեկտեմբերի: «Pester Lloyd» ասում է, որ ռուս-աւստրիական սահմանադիմի վրա տեղի ունեցող վիճարկութեան վերաբերեալ տարաձայնութիւնները չը պէտք է թուլացնեն Աւստրի-րիայի նախազգուշութիւնը: Նախապատրաստութիւնների յատկագիծը արդէն պատրաստ է, և պաշտպանողական միջոցները սկզբներում այնուամենայնիւ չափաւոր կը լինեն:

ԲԵՐԼԻՆ, 5 դեկտեմբերի: Այսօր բորսան յուզվեց «Nord»-ի յօդուածի, և այն լուրի պատճառով, որը հաղորդում է թէ Աւստրո-Ռուսական մտադիր է մեծ փոխառութիւն անել: Ռուսաց բոլոր տոկոսաբեր թղթերի դինքը ընկան. թղթադրամի մի ռուբլի արժէ 176 մարկ:

ԲԵՐԼԻՆ, 5 դեկտեմբերի: Բէյլստադը ընդունեց հետեւեալ մարտահարկերը. հաճարի—4 մարկ (հարկը կիւղարմից) ցորենը և վարսակը—5 մարկ: ԿԱՍԱ, 7 դեկտեմբերի: Կաղանի համալսարանի ուսանող կոնստանտին Ալեքսեւիչ այդ համալսարանի ուսանողների տեսչին խօսելու համար, տրվեցաւ զինուորական վարչութեան ուղղիչ զորաբանին երեք տարով:

ՀՈՍՏ, 7 դեկտեմբերի: Պետերբուրգի իտալական դեսպան նշանակվեց բարոն Մարոկէտտի:

ԲԵՐԼԻՆ, 7 դեկտեմբերի: Կայսրի մօտ չաքաթ օր տեղի ունեցած զինուորական դեկուզումների առիթով հաղորդում են, որ պէտք է հերքվի «Русский Инв.»-ի հաղորդած այն լուրը, թէ Գերմանիան պատերազմական պատրաստութիւններ է տեսել:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳԻ ԲՈՐՍԱ			
Գնականների 4-ին			
Ռուսաց 1 ռուբլի 1 ծրարի վրա արժէ	211/8	պղնձ.	
— — — — —	1781/4	սի.ֆ.	
— — — — —	222	սան.	
Ռուբլի — — — — —	9	10	4
Մաքսային կուպոններ — — — — —	181	75	—
Արծաթ — — — — —	1	34	—
Բորսային դիսկոնտներ — — — — —	57/8	4	70/0
Պետակ. բանկ. 50/0 տոմս 1-ին շրջանի	99	87	—
— — — — —	2-րդ	98	—
— — — — —	3-րդ	99	87
— — — — —	4-րդ	97	87
— — — — —	5-րդ	98	12
— — — — —	6-րդ	—	—
Արեւելեան 50/0 փոխառութ. 1-ին շրջ.	97	87	—
— — — — —	2-րդ	97	75
— — — — —	3-րդ	97	62
Նիւրնբեր 50/0 առաջին փոխառութ.	275	50	—
— — — — —	247	50	—
51/20/0 ռէնտա	103	—	—
Ռուսաց ռէնտա	193	75	—
Եօթներորդ կոնսոլիդաց. փոխառութիւն	162	50	—
Նոր երկաթուղային ռէնտա	97	87	—
50/0 զրաւական թղթեր կալուած.	167	—	—
— — — — —	97	62	—
51/20/0 զրաւական թղթեր Ինքնօնի կալուած բանկի	98	87	—
60/0 զրաւակ. թղ. խաղկովի կալ. բան.	101	87	—
— — — — —	101	12	—
— — — — —	101	12	—
— — — — —	101	62	—
— — — — —	102	—	—
— — — — —	101	—	—
— — — — —	101	—	—
— — — — —	100	87	—
— — — — —	27 և 43 տ.	—	—
— — — — —	18 և 43 տ.	—	—
Վճարված-կամակի բանկի ակցիաները	715	—	—
Ռուսաց երկաթուղային գլխաւ. ընկ.	266	—	—
Ռիբինսկ-Վոլոգդի ընկ.	85	25	—
Ս. Պետերբուրգի քաղաքային օրինադրանք	94	12	—
Մոսկովայի քաղաք. օրինադրանք	93	37	—
Օդէսայի — — — — —	93	75	—
Թիֆլիսի քաղաք. կրկն. ընկ. օրն.	—	—	—
Նոր փոխառութիւն	81	87	—
Ս. Պետերբուրգի բորսայի արամադրութիւնը հանդարտ է:			

Խմբագիր-հրատարակող ԳԻՏԻՆ ԱՐԴԱՅԱՆ

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՅՈՑ ՀՈԳԵԻՈՐ ԴՊՐՈՑԻ Հոգաբարձական խորհրդարանում, դեկտեմբեր ամսի 23-ին, երեկոյան 8 ժամին, լինելու է երկրորդ անգամ աճուրդ, կապալով տայու Ներսիսեան Հին դպրոցի ներքնայարկի կրպակները: Պայմանաթուղթը կարելի է կարգաւ հոգաբարձութեան գրասենյակում մէջ ամեն օր, բայց կիրակի և տօն օրերից, առաւօտեան 10 ժամից մինչև 12 ժամը:

Հոգաբարձու՝ Մ. Թամազեան
Գործակալ՝ Բ. Հ. Ջալալեան

ԱՅԴ ՇԵՐԱՄԱՊԱՀՆԵՐԻՆ

ԼԵՐԻՍԷ շուտով ստանալու է Պատերազմի սխեմայով «Յէլիէր» անուանված ՇԵՐԱՄԱՊԱՀՆԵՐԻ ԲԱՆԿԱՆ նշանաւոր քանակութիւն, թէ ֆրանսիական և թէ իտալական առաջնակարգ ֆիրմաներից: Գաւազելու են 1 ռուբլիով զօլտնիկը, կամ 80 ռուբլիով ֆունտը:

ԲՕԺՕԺՆԵՐ ԵՒ ՍԵՐՄԵՐ տեսնելու համար պէտք է գիմել՝ Միքայէլեան կամուրջ, խանութ № 12, Թիֆլիսում:

1888 ԹԻՆ
(Ե Օ Թ Ե Ր Ո Ր Դ Տ Ա Ր Ի)

ԱՐԶԱԳԱՆԻՔ

ՇԱՐԱԹԱԹԵՐԹԸ ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՎԻ ՄԻ ԵՒ ՆՈՅՆ ԴԻՐԹՈՎ ԵՒ ՀԵՏԵՆԱԼ ՊՐՈԳՐԱՄԱՅՈՎ

I. Տեղեկութիւններ կառավարութեան զործողութիւնների և օրենսդրական միջոցների մասին—II. Առաջնորդող յօդուածներ հասարակական կեանքի նշանաւոր հարցերի վերաբերութեամբ—III. Թղթակցութիւններ հայաբնակ տեղերից, ընդհանուր տեսութիւն հայ և օտար լրագիրների տեղեկութիւնների և կարծիքների—IV. Տնտեսական և առևտրական հարցերի քննադատութիւն—V. Յօդուածներ ժողովրդական կրթութեան վերաբերութեամբ—VI. Արտաքին տեսութիւն. յօդուածներ և տեղեկութիւններ արտասահմանեան հասարակական և քաղաքական կեանքի նշանաւոր անցքերի մասին—VII. Կրիտիկա և մատենախոսութիւն—VIII. Ֆէլիէտօն—IX. Զանազան լուրեր—X. Յայտարարութիւններ:

«Արձագանքին» 1888 թ. կաշխատակցեն բոլոր ներկայ աշխատակիցները: Տարեկան բաժանորդագրին է 5 ռուբլի: Կէս տարվանը 3 ռուբլի: Թիֆլիսում ստորագրութիւն ընդունվում է խմբագրատանը և «Կենտրոնական գրաւաճառատնոցում»:

Օտարադպրացիք դիմում են՝ Тифлисть, въ редакцію «Арцаганкъ». արտասահմանից՝ Tiflis, Rédaction du journal arménien «Ardzagang»:

Ապագիկ բաժանորդագրութիւն չէ ընդունվում:

Խմբագիր-հրատարակիչ ԱՐԳԱՐ ՅՈՎ.ՀԱՆՆԻՍԵԱՆ

ОТКРЫТА ПОДПИСКА
на 1888 годъ
на издающуюся въ Ставрополѣ (Кавказскомъ) общественно-литературную газету
„СЪВЕРНЫЙ КАВКАЗЪ“
посвященную нуждамъ Сѣвернаго Кавказа и выходящую два раза въ недѣлю
IV годъ изданія

Посвящая свои столбцы нуждъ выясненію края, названіе котораго носить газета, редакция въ тоже время даетъ въ сжатомъ видѣ свѣдѣнія о всемъ Кавказѣ, о внутренней жизни Россіи и жизни иностранныхъ государствъ. Для этой цѣли помѣщаются телеграммы „Сѣвернаго телеграфнаго агентства“ и существуютъ отдѣлы: „По Кавказу“, „По Россіи“ и „Изъ за-границы“; причемъ на отдѣлѣ „По Кавказу“ будетъ обращено особое вниманіе редакціи.

ПОДПИСНАЯ ЦѢНА:
Безъ доставки и пересылки: На годъ . . . 4 р. 50 к. На годъ . . . 5 р. 50 к.
— полгода . . . 2 „ 50 — полгода . . . 3 „ 50
— 3 мѣсяа . . . 1 „ 50 — 3 мѣсяа . . . 1 „ 75
Суммы менѣе рубля можно выслать марками. Допускается разсрочка платежа—но соглашенію съ редакціей.
Адресъ редакціи: г. Ставрополь-Кавказскій, домъ Салмина.
Редакторъ-Издатель Д. И. Евсѣевъ.
1—3

EXPORTATION-IMPORTATION
CONSTANTIN P. CHÉHIA NTZ
MILAN (ITALIE)

Կոնստանտին Պ. ՇԵՆԱՆԻՑԻ առևտրական գրասենյակը լինելով ՄԻԱՆ, և ունենալով ուղղակի յարաբերութիւններ Իտալիայի, Շվեյցարիայի և Ֆրանսիայի ֆաբրիկաների հետ, կրնաւոր յանձնարարութեամբ ապրանքներ ծախելու համար հետեւեալները մետաքս, բոժոժ, մետաքսի և բոժոժի մնացորդը, բուրդ, բամբակ, ցորենեղէն, նաւթ և ընդհանրապէս Կովկասեան միւս ամեն տեսակ ապրանքները, որոնք ծախվում են Եւրոպայում: Յանձնարարութեամբ կրնաւոր զարգնել առնել Եւրոպայի ամեն տեսակ ապրանքներ Կովկասի համար: Ամբողջ ապրանքները ստանալուց աժան և ձեռնուռ պայմաններով փող կը տայ ի հաշիւ. մանրամասն տեղեկութեանց համար գրիչ այս հասցեով. Monsieur Constantin P. Chéhiantz, № 18, Via Lauro, Milan, (Italie) ՄԻԱՆԻ (Италия).

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր
ՆՈՒՋԻՆ ՄԱՍՆԱԻՈՐ ՀԻՄՆԻՄՆՈՑ
Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԳԻՆՅԱՆԻ
(Կուկիա, վարձնոցի արձանի հանդէպ)
Հիւանդանոցին ընդունում են ամէն օր
Ա Ռ Ա Ի Օ Տ Ն Ե Ր
ԲՈՒԴԿՈՎՍԿԻ—10—11 ժ. ներքին, երեկայոց և կանանց ց.
ԿԻՆ—ԲԺԷԼ ԻՍԱՀԱԿԵԱՆՑ 11—12 ժ. կանանց և երեկայոց ց.
ԲԵՆԿԵՎՍԿԻ—11—12 ժ. ականջների, կոկորդի, սիֆիլիսի և տառմների ց.
Ա. ԳՈՒՐԿՈ—12—1 ժ. աչքի, ներքին և մանկական ց.
ԱՐՏԵՄԻՆԵՎ—12—1 ժ. երեքշաբթի և ուրբաթ, կանանց ց.
ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—12—1 ժ. ներքին և երեկայոց ց. ամէն օր, բայց երեքշաբթի և ուրբաթ.
ԵՐԵՎԱՆԵՐԸ
ԶԱԵՎՍԿԻ—5—7 ժ. ջրային ց. և էլէկտրո-տերապիա.
ՓՈՒՎԻՆԵԱՆ—6—7 ժ. ներքին և երեկայոց ց.
Հիւանդանոցումն է մահ կա բարձու հի. Մ օ գ ե բ:
ՎՃԱՐ—50 կ.: Համախորհրդի (Կոնսիլիումի) համար համաձայնութեամբ: Մշտական անկողիններ.
Հիւանդանոցի փոխ-վերատեսուչ ԲՈՒԴԿՈՎՍԿԻ
Արդէն ծախվում են կատարելագործված, սպիտակ բոցով անվտանգ
ՇՎԷԴԱԿԱՆ ԼՈՒՑԿԻՆԵՐԸ
ԱՄԵՆԱԷԺԱՆ ԳՆՈՎ:
Մեծ քանակութեամբ առնողներին ՆՇԱՆԱԻՈՐ ԶԻՋՈՒՄՆ ԿԸ ԼԻՆԻ:
Գործարան Գ. Ա. ՏԵՐ-ԱՍՏԱՆՈՒԲԱՆԻ և ընկերութեան, Թիֆլիսում, ՎԷՐԱ Կոշված թաղում:
5—50
Լ. Բ. ԽԻԴԻԿԵԼԻ
ԼՐԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱՎԱԼՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԴՐԱՎԱՅԱՌԱՆՈՑԸ
(Գօլօվնիսկի պրոսպեկտի վրա, Ալեքսանդրեան այգու մօտ) ընդունում է ստորագրութիւն 1888 թ.ին հրատարակելի բոլոր պարբերական հրատարակութիւնների համար, խմբագրական դիմումը:
11—15